ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

0024, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26/1

«05» 02 2025թ.

Հ 117-72-2025

«Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊԸ-ին

(ՀՎՀՀ 02890282)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հանրապետության նախագահի աշխատակազմի և «Մ. Ա. Կիրակոսյաններ» ՍՊ ընկերության միջև 03.11.2023թ. կնքվել է ՀՆԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/02-1 ծածկագրով «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրի 8.15 կետով սահմանված է, որ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Նույն կետով սահմանված է նաև հետևյալը՝ «Վաճառողը համաձայնագիրը կնքում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է»:

2025 թվականի համար Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ, ուստի 08.01.2025թ.-ին Ձեր ընկերության էլեկտրոնային փոստին /tciatcan-nerker@mail.ru/ ուղարկվել է համաձայնագիր կնքելու մասին ծանուցումը (առաջարկը) և համաձայնագրի նախագիծը:

Առ այսօր Ձեր կողմից համաձայնագիրը չի կնքվել և չի ներկայացվել: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 33-րդ կետի

Կատարող՝ Սյուզաննա Սարգսյան
Հեռ. 010-71-00-96

12-րդ ենթակետով և Պայմանագրով համաձայնագիր կնքելու համար սահմանված ժամկետը լրացել է:

Հիմք ընդունելով վերոգրյալը Հանրապետության նախագահի աշխատակազմը 2025 թվականի փետրվարի 4-ին, Պայմանագրի 8.15 կետին համապատասխան, մասնակի՝ 541,750 (հինգ հարյուր քառասունմեկ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամի մասով, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Ձեր ընկերության կողմից պայմանագրի և որակավորման ապահովումների համար ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը համապատասխան վճարման պահանջագրերով և այլ անհրաժեշտ փաստաթղթերով ներկայացվելու է Ձեր ընկերությանը սպասարկող բանկին՝ 54,175 ՀՀ դրամ և 81,252.5 ՀՀ դրամ գանձելու նպատակով: Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում գումարը չվճարվելու դեպքում, չվճարման հետ կապված Ձեր ընկերության մասին տեղեկությունները փոխանցվելու է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը և չի վճարել պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները: Հետևաբար՝ Պայմանագրի և որակավորման ապահովման գումարները տասն օրվա ընթացքում վճարելու դեպքում Ձեր ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ԽԱՉԱՏՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Սյուզաննա Սարգսյան
Հեռ. 010-71-00-96